# ՆԻՔՈԼԱՍ ՔԻՇԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱՏԱՌԵՐԸ

Պրոֆ. ԳԵՈՐԳ ՀԱՅՄԱՆ (Հունգարիա)

Հունգարացի Նիքոլաս Թոթֆալուշի (կամ Միսթոթֆալուշի) Քիշը[1], որ Տրանսիլվանիայում ռեֆորմիստական եկեղեցու քոլեջ էր ավարտել և դպրոցի գործունյա ուսուցիչ էր, 1680—1689 թթ. ապրել է Ամստերդամում։ Այստեղ նա սովորում է տառահարների (պունսոն) փորագրություն, նաև տառաձուլություն և տպագրություն, այնուհետև սեփական տպատառերով լույս է ընծայում Աստվածաշունչը հունգարերեն և հռչակ ձեռք բերում մի քանի երկրներում իր տառահայրերով և տառամայրերով (մատրիցա), որ պատրաստում էր օտար տպագրիչների և ձուլորդների համար[2]։

1685 թ. Մաթևոս Վանանդեցին որոշում է Ամստերդամում վերահաստատել հայկական տպագրությունը և նոր տպատառեր է հայթայթում իր տպարանի համար (նկ. 1)։ Այն փաստը, որ նրա տպատառերը փորագրել է Նիքոլաս Քիշը (արտասահմանում նա իր անվան այս կարճ ձևն էր կիրառում), բացահայտվել է միայն վերջերս, հունգար հեղինակ Օդոն Շյուտցի կատարած հետազոտությունների շնորհիվ[3]։ Պարոն Շյուտցի ուսումնասիրությունները հայտնի են հունգար և հայ մասնագետներին։ Իր հոդվածներում նա տվել է XVII դարի երկրորդ կեսին Ամստերդամում գործող հայ տպագրության ավարտուն պատկերը։ Բացի այդ, նա պարզաբանել է Նիքոլաս Քիշի փորագրած հայկական տպատառերի պատմությունը։

Մեր այս հոդվածի նպատակն է որոշել հայկական տպագրության մեջ օգտագործված տպատառերը և տարբերակել Քիշինը այլ վարպետների փորագրածներից։

Ինքնակենսագրության մեջ Քիշն ասում է. «Հայաստանը հեռու է Ամստերդամից, սակայն ես կարողացել եմ մեծ աջակցություն ցույց տալ հայերին»[4]։ 1686 թ. նոյեմբերի 12-ի նամակում Քիշը խոսում է հայկական տպատառերի

---

1 Ազգանունը «Քիշ»-ն է, ըստ ծննդավայրի անվանվում է «Թոթֆալուշի»։

2 György Hayman, Totfalusi Kis Miklos, a betümüvész és a tipográfus, Életének müve betülnek es nyomtatványainak tükreben, Budapest, 1972 (*«Տպատառ փորագրող և տպագրիչ Նիքոլաս Թոթֆալուշի Քիշ, կյանքն ու գործունեությունը արտացոլված տպատառերի և տպագրության միջոցով»*)։

3 Ödön Schütz, Misztótfalusi Kis Miklos szolgálatai az örménjeknek, „Magyar Könyvszemle", Budapest, 1957 (*«Նիքոլաս Թոթֆալուշի Քիշի ցուցաբերած ծառայությունները հայերին»*), *էջ 335—336*։ *Նույնի՝* Nicholas Mistotfalusi Kis and the Armenian Book Printing, „Acta Orientalia", Budapest, 1959 (*«Նիքոլաս Միսթոթֆալուշի Քիշը և հայկական գրատպությունը»*), *էջ 63—73*։

4 M. Totfalusi Kis Miklosnak... Mentsége, Kolorsvár, 1968 (*«Նիքոլաս Քիշի ջատագովությունը...»*), *էջ 68*։

մասին և հայտնում, որ դրանք փորագրելու արտակարգ վարպետություն է ձեռք բերել[5]։

1685 թ. Ամստերդամում Մաթևոս Վանանդեցու կողմից տպագրված Շարակնոցի հիշատակարանում ասվում է հետևյալը. «Վասն որոյ դիմեցի յերկիրն Հոլանդիոյ՝ 'ի վայելուչ քաղաքն յԱմստէլոդամ, և գտի ղլաւ վարպետ իմն, որ անուամբ Նիկոլայուս ասի. և ետու յօրինել զգիրս այբուբենից բազմօք աշխատանօք, և զայլ տեսակս ևս գրոց նոտրի և բոլորի»[6] (նկ. 2)։



Նկ. 1

«Վասն որոյ դիմեցի յերկիրն Հոլանդիոյ՝ 'ի վայելուչ քաղաքն յԱմստէլոդամ, և գտի ղլաւ վարպետ իմն, որ անուամբ Նիկոլայուս ասի. և ետու յօրինել զգիրս այբուբենից բազմօք աշխատանօք, և զայլ տեսակս ևս գրոց նոտրի և բոլորի.

Նկ. 2

Ավելի ուշ թվագրված մի փաստաթուղթ՝ „Nicolas anders genaat den onger“ կամ „Nicolas Kis“ վերտառությամբ, ստույգ կերպով հաստատում է, որ հայկական Շարակնոցի տպատառերը փորագրել է Նիքոլաս Քիշը[7]։

Մի այլ գրություն[8] պարունակում է որոշ արժեքավոր փաստեր։ Ըստ այդ (1685 թ. փետրվարի 6-ի) համաձայնագրի, ամստերդամցի առևտրական Սիմոն դե Մալին Նիքոլաս Քիշին պատվիրում է պատրաստել այնպիսի տառահայրեր ու տառամայրեր, որոնք տպատառերի և նշանների իր պատրաստած նմուշների մեջ եղած չլինեին։ Տառաշարքը, հավանաբար, եղել է լատինա-

5 Տե՛ս Նիքոլաս Քիշի 1686 թ. նոյեմբերի 12-ի նամակը (լատիներեն—Գ. Հ.) ուղղված Յոհան Գաբրիել Սփարուենֆելդին վրացական տպատառեր փորագրելու մասին (MS. in Stifts och Landsbiblioteket, Linköping, Sweden, Ref. Br. 33, № 15)։

6 Բոլորգիրը հայկական թեք տպատառ է (նկ. 3, 778—779-րդ էջերի հիշատակարանը տպագրված է բոլորգրով)։ Շարակնոցի անվանաթերթի առաջին տողերը գրված են հայերեն մեծատառերով (նկ. 1), որ կոչվում են նաև գլխատառ, իսկ երբեմն՝ ունցիալ։ Անվանաթերթի կենտրոնական երեք և ներքևի երկու տողերը նոտրգիր են։

7 «Ժողովրդական նոտար Ֆրանսուա Տիբսերանդետի զեկուցագիրը», Ամստերդամ, 2 դեկտեմբերի 1694 թ.։ Տե՛ս K. M. Kleerkooper, W. P. van Stockum, Jr. D. boekhandel te Amsterdam voornanrelijk in de 17 eenw. s'Graverhage, 1914—1916, էջ 773—774։ Տե՛ս նաև՝ Ödön Schütz, Misztotfalusi Kis Miklos..., ծան. 2։ Դա վերաբերում է տպատառերի փորագրման այն համաձայնագրին, որ կնքվել էր հայ տպագրիչ „Matteo Johannes“-ի և Նիքոլաս Քիշի միջև սույն զեկուցագրից ութ կամ ինը տարի առաջ։

8 «Սիմեոն դե Մալիի և Նիքոլաս Քիշի միջև կնքված համաձայնագիր», Ամստերդամ, 6 փետրվարի 1685 թ., City Archives Amsterdam, ref. Notariele Archieven 4964. 134—144. տե՛ս Kleerkooper, van Stockum, նշվ. աշխ., էջ 11։

կանից տարբերվող մի այբուբենի համացույցը (սինոպսիս) և յուրահատուկ այս նշաններից ոչ մեկը նման չի եղել լատինական տպատառերի։ Հաստատապես կարելի է ասել, որ սույն համաձայնագիրը ո՛չ Քիշի ամստերդամյան տառաշարքին է վերաբերում և ո՛չ էլ մեկ այլ տարածված նմուշի, քանի որ դրանով տպագրված են ոչ թե տպատառերի և նշանների օրինակներ, այլ



Նկ. 3

տեքստեր։ Այս փաստաթղթի մեկ այլ հետաքրքիր կողմն այն է, որ ըստ պայմանի շեշտադրության և երկբարբառների նշանները նույնպես պետք է ունենային իրենց տառահայրերը։ Դա վկայում է, որ այդ տառատեսակները պատրաստվել են շեշտեր և երկբարբառներ ունեցող լեզվի համար։ Համաձայնագրով պայմանավորված է նաև, որ այդ տպատառերը աշխարհում ոչ մի այլ գնորդի չեն տրվի։

Հայտնի չէ, թե այս համաձայնագիրը կապ ունի Քիշի հայկական տպատառերի հետ, թե ոչ։ Սիմոն դե Մալին կարող էր հայ լինել, եթե նա նույն Սիմոն Մալայն է, որ հայկական համայնքների ամստերդամյան մի տեղեկագրությունում հանդես է գալիս իբրև թարգմանիչ։

Մենք վերը բերեցինք Շարակնոցի հիշատակարանը, ըստ որի Նիքոլաս Քիշը պատրաստել է երեք կարգի տպատառ՝ «զգիրս այբուբենից բազմօք աշխատանօք, և զայլ տեսակս ևս գրոց նօտրի և բոլորի»։ Ամենայն հավանականությամբ «այբուբենի» տակ Շարակնոցի բոլորգիրը պետք է հասկանալ

(նկ. 3)։ Նույն հիշատակարանում նշված նոտրդիրը կարելի է տեսնել գրքի տիտղոսաթերթի վրա (նկ. 1)։ Ես չգտա մեկ այլ՝ ավելի փոքր բոլորգիր ինձ հայտնի Շարակնոցի էջերում։ Սակայն Վանանդեցու ուշ հրատարակություններում կրկին նման տպատառ է պատահում։ Բայց այս հիշատակարանը չի օգնում տարբեր տպատառեր բացահայտելուն։ Դա պատճառ դարձավ, որ ծա-



Նկ. 4



Նկ. 5

վալենք մեր հետազոտությունը մինչև XVII դարի երկրորդ կեսի և, նույնիսկ, XVIII դարի Վենետիկի հայկական տպագրությունը։ Վենետիկը կապված էր Ամստերդամի տպագրական գործունեության հետ, քանի որ Հոլանդիայում հայկական տպագրության դադարումից հետո XVIII դարի առաջին կեսին Սիքոլաս Քիշի տառահայրերն ու տառամայրերը փոխադրվել էին Վենետիկ։

Հայտնի է, որ Վենետիկի հայկական միաբանությունը 1720-ական թթ. վերջին գնել է Նիքոլաս Քիշի հայկական տպատառերի տառահայրերն ու տառամայրերը, որոնց ձեռք բերման մասին Մխիթարյան միաբանության հրատարակություններից մեկը հաղորդում է. «Հասին առ մեզ պղնձի գաղափարք տպագրական տառից, և ընդ իւրաքանչիւր նոցա պողովատիկ նշանագիծք, յորոց գրոշմելոյ լինին գաղափարքս այսոքիկ. և էին սոքա երից կարգաց. զի էր նոսա խոշորագիր, մանրագիր և միջասահման. և իւրաքանչիւրում կարգի եղեալն ունէր զիւր գլխագիրն ըստ իւրում պայմանին, այլ և նշանագիծս կետից, շեշտանշակաց և այլոց նշանախեցից, որք առ տպագրութիւն գրոց կարևորք են. ամբողջ, աննիազ և անվթար»[9]։

9 Գ. Զարբհանալյան, Պատմություն հայկական տպագրության, Վենետիկ, 1895, էջ 150, Ödön Schütz, Nicholas Mistótfalusi Kis..., էջ 73։

Այսպիսով, այստեղ էլ տպատառի երեք կարգ է նշված, բայց այն հարցը, թե հատկապես որոնք էին դրանք, մնում է չլուծված։

Այս խնդրի երրորդ լրացուցիչ նյութը Մխիթար Վանանդեցու երկու նամակներն են՝ գտնված Ս. Ղազար կղզու վանքում, Վենետիկի հայկական միաբանության արխիվում։ Առաջինը՝ գրված 1728 թ. սեպտեմբերի 17-ին,



ՌԷՆ ՌՈ ԸՆԹԵՐՑՈՂ Ս·

Նկ. 6



Համդերձ Ի՛ստուծով։

ԳԻՐՔ ԱՀԻՐ ՈՒ ԹԵՐԵՎԻՑ·

Նկ. 7

հասցեագրված է Ամստերդամ, եղբայր Հարությունին։ Այդ նամակում ասվում է, որ ձեռք են բերված հարյուր տառահայր և հարյուր տառամայր, որոնց համար վճարվել է 550—800 գուլդեն։ Նամակում խոսվում է տպատառերի համալիրների, փայտե տպատառերի և տպագրական նախշերի գնման մասին։

Մխիթար վանահոր մյուս նամակը գրված է 1729 թ. ապրիլի 21-ին և հասցեագրված է եղբայր Եղիշեին։ Նամակից պարզվում է, որ ամստերդամյան բոլոր տառաձևերը, տառահայրերն ու տառամայրերը, որոնք ոչ մի ուրիշ տեղ հնարավոր չէր գտնել, բերվել են Վենետիկ։ Այնուհետև, նամակի հեղինակը կարծում է, որ ճիշտ կլինի այս փաստը չհայտնել հասարակությանը[10]։

Այսպիսով, աղբյուրները Նիքոլաս Քիշի փորագրած տպատառերի մասին ավելի ստույգ տեղեկություններ չեն հաղորդում։

Սակայն ծագած հարցերի պարզաբանմանը նպաստում են նույն դարաշրջանում տպագրված գործերը։

---

10 «Նամակագրություն վանահայր Ն. Ղուկաս Ֆողոլյանի հետ»։ Կցանկանայինք շնորհակալություն հայտնել Տիբոր Քլանիցային տեղեկություններ տալու համար։

Աշխատանքի ընթացքում տպատառերի որոշակի խմբավորման պահանջ զգացվեց։ Առանձնանում են՝ տպատառերի թվահամարը, III աղյուսակը (աղյուսակում ● — նշանակում է, որ տեքստը հիմնականում տպագրված է տվյալ տպատառով, 0 — տեքստի մի փոքր մասն է տպագրված այդ տպատառով), նկարները, որոնց միջոցով հնարավոր է ճանաչել տպատառերի տեսակները։



Նկ. 8




Նկ. 9

I և II աղյուսակներում տեղեկություններ են տրված Ամստերդամում և Վենետիկում հրատարակված մեզ հայտնի հայկական գրքերի մասին։

Տպատառերի չափումներն այսպիսին են. 120×1, 3 H6, 0 մմ։

Առաջին թվանիշը շարադրանքում եղած 20 տողերի չափն է, հաշված առաջին տողի հիմնատողից մինչև 21-րդ տողի հիմնատողը։

×-ին կից թվանիշը ցույց է տալիս տառերի բարձրությունը (օր.՝ բոլորգիր տպատառերի)։

H-ին կից թվանիշը ցույց է տալիս մեծատառերի և գլխատառերի միջին մեծությունը։

Ամստերդամի և Վենետիկի հայկական տպատառերի համակարգը այսպիսին է.

Ա. Ամստերդամի հին տպատառ. պատկանում է Ամստերդամի հայկական

Աղյուսակ I

Ամստերդամի հրատարակություններ

| № | Վերնագիր | Տպագրիչ | Տպագրության թվական |
|---|---|---|---|
| Ա. 1 | Յիսուս որդի | Սկսել է Ծարեցին<br>Ավարտել է Ավետիսը | 1661, մարտի 15 |
| Ա. 2 | Սաղմոս | Ավետիս | 1662, դեկտ. 13 |
| Ա. 3 | Ժամագիրք | Ավետիս | 1663, փետրվ. 12 |
| Ա. 4 | Սաղմոս | Ոսկան (և իր աշակերտ Կարապետ Անդրիանեցի) | 1664, ապրիլ 1 |
| Ա. 5 | Շարակնոց | Ոսկան (Կարապետի գործակցությամբ) | 1664, օգոստ. 14 |
| Ա. 6 | Աստվածաշունչ | Ոսկան | 1666 |
| Ա. 7 | Ժամագիրք | ? | 1667 |
| Ա. 8 | Շարակնոց | Սկսել է Ոսկանը<br>Ավարտել է Պետրոս Ջուղայեցին | 1669 |
| Ա. 9 | Շարակնոց | Վանանդեցի | 1685 |
| Ա.10 | Շարակնոց | Վանանդեցի | 1692 |
| Ա.11 | Խորենացու Ժամանակագրությունը | Վանանդեցի | 1695 |
| Ա.12 | Նոր կտակարան | Վանանդեցի-Թովմաս | 1698 |

գրատպության սկզբնական ժամանակաշրջանին, այսինքն՝ Մաթևոս Ծարեցու գործունեությանը։

Գլխատառ և բոլորգիր № 2. չափերն են՝ 120×1, 3 H₆, 0 մմ (նկ. 4)։ Դրա առաջին օրինակը դիտվում է 1660 թ. մինչև 1698 թ., իսկ գլխատառը՝ նաև Վենետիկում 1731—1772 թթ. տպագրված գրքերում։ Ծարեցին «Յիսուս որդի» պոեմի տպագրությունը սկսել է այս տառաձևով (աղ. I, Ա 1), իսկ 606-րդ էջի հիշատակարանում նա ներումն է խնդրում թերությունների համար։ Ծարեցին մահացել է 1661 թ. հունվարի 22-ին։ Գրքի տպագրությունն ավարտել է Ավետիս Երևանցին («Յիսուս Որդի», էջ 607—608)։ Ծարեցու վերջին կամքով տպարանը հետագայում կոչվել է սբ. Էջմիածնի և սբ. Սարգիս զորավարի անվամբ։ 1662 թ. Սաղմոսարանի (աղ. I, Ա 2) 4-րդ էջի հիշատակարանում Ավետիսը նշում է այն տպատառը, որ Ծարեցին ավագ քահանա օրհնյալ Մովսեսից վերցնելուց հետո վերափորագրել է մեծ չարչարանքով և աշխատությամբ։

Այսպիսով, № 2 տպատառը պատրաստել է տվել Ծարեցին։ Ըստ 1658 թ. նոյեմբերի 27-ի համաձայնագրի վկայության, Ծարեցին տպատառ պատրաստելը պատվիրել է հայտնի տառահայր փորագրող Քրիստոֆել Վան Դեյքին (1605—1670)[11]։

Բ. Ծարեցու հետնորդները չհավանեցին այդ «չափազանց խոշոր ու անհարմար» տպատառերը, ուստի նորերը պատրաստեցին[12]։

---

[11] J. Berg. De voormalige Armenische drukkerijen te Amsterdam, Bibliotheekleven (Utrecht), 1924, էջ 29—33։

[12] Ődőn Schütz, Nicholas Mistótfalusi Kis..., էջ 68։

Աղյուսակ II

Վենետիկի հրատարակություններ[13]

| № | Վերնագիր | Տպագրիչը և տպագրության տարեթիվը | Գրադարան №№ |
|---|---|---|---|
| 1 | Պարտէզ հոգևոր. թարգմ. Հ. Կոստանդնուպոլսեցու | Անտոնիո Բորտոլի 1704 | 319.266 |
| 2 | Խաչատուր Էրզրումեցի. Համառօտութիւն բարոյականի Ա[ստուա]ծաբանութեան (Compendium teologiae moralis) | Անտոնիո Բորտոլի 1709 | 608.763 |
| 3 | Ալբերտ Մեծ. Համառօտութի[ւն] ա[ստուա]ծաբանութե[ան] (Compendium teologicae veritatis). հրատ.՝ Մխիթար Սեբաստացի։ Նույն գրքում՝ նաև Լուծմունք... | Անտոնիո Բորտոլի 1715, 1716 | 319.270 |
| 4 | Պատմագիրք հոգւոց հաւատացեալ ննջեցելոց. թարգմ. Հ. Թոխաթեցու | Անտոնիո Բորտոլի 1724 | 319.268 |
| 5 | Ղուկաս Փինելոս, Գիրք յորում ընձեռի զճանդերձելոյ կենաց (Cersone, della perfezione religioso), թարգմ. Հ. Նիգոմիթացի։ | Անտոնիո Բորտոլի 1731 | 319.263 |
| 6 | Գիրք առակաց | Անտոնիո Բորտոլի 1734 | 319.267 |
| 7 | Մխիթար Սեբաստացի. Մեկնութիւն գրոց ժողովողին | Անտոնիո Բորտոլի 1736 | 808.941 |
| 8 | Ալփոնսոս Ռոտրիկվեց. Կրթութիւն կատարելութեան և կրօնաւորականի առաքինութեան (Exercicio de Perfection...), թարգմ.՝ Բ. Թիֆլիզեցու | Անտոնիո Բորտոլի 1741 | 319.269 |
| 9 | Ս. Ջ. Յովհաննես փ. Դժոխք բացեալ. թարգմ. Մխիթարի աշակերտների | Ստեփանոս Օրլանդյան 1753 | 319.264 |
| 10 | Մխիթար Սեբաստացի. Կրթութիւն աղօթից (Exercitio praecum) | Դեմետրիոս Թեոդուլյանց 1772 | 319.265 |

Գլխատառ և բոլորգիր № 4. առաջին անգամ դիտվում է 1663 թ. ժամագրքում (աղ. I, Ա 3)։ Ըստ մեր դիտումների այս տպատառը գոյատևել է մինչև 1692 թ.։ Իսկ գլխատառերը հայտնվել են Վենետիկում 1715 և 1724 թթ.։ Չափերն են՝ 85×1,1H$_4$, 0∼4, 2 մմ (նկ. 5)։

Ժամագրքի 4-րդ էջի հիշատակարանում կարելի է կարդալ, որ նոր հրատարակությունը կատարվել է նորաստեղծ տպատառերով, և որ այդ ամենի ծախսն արել է ավագ քահանա Ոսկանի եղբայր Ավետիսը։ 624-րդ էջի հիշատակարանից երևում է, որ նա տպագրությունն ավարտել է 1663 թ. փետրվարի 12-ին։ Դժվար է պարզել այն մարդու անունը, որ փորագրել է «նորաստեղծ» № 4 տպատառը։ Վան Դեյքի 1685 թ. համաձայնագրում նշվում է 2 տեսակի տպատառ և մինչև Ծարեցու մահը, երևի, դրանցից միայն մեկը՝ № 2-ն է պատրաստվել։ Համաձայնագրի հիման վրա կարելի է ենթադրել, որ Վան Դեյքը Ծարեցու հետնորդների համար պատրաստել է երկրորդ՝ ձևափոխված տպատառ, այսինքն՝ № 4-ը։ 1666 թ. Աստվածաշնչի տիտղոսաթերթը հրատարակելիս Ու. Փ. Վան Սթոքամը նույնպես նոր տառերը վերագրում է Վան

[13] Բուդապեշտի Ազգային Széchényi գրադարանում պահվող, Վենետիկում տպագրված հայկական գրքերի մասին մեր ակնարկը հիմնված է Օդոն Շյուտցի հոդվածի վրա՝

Դեյքին[14]. դա, այնուամենայնիվ, ապացուցման կարիք ունի։ Անկասկած, նոր տպատառը կրում է հիանալի մի վարպետի ձեռքի դրոշմը։

Հավատացած ենք, որ այս տպատառը կարող էր ավելի փոքր չափեր էլ ունենալ, սակայն մեր ուսումնասիրած ամստերդամյան գրքերում այդպիսիք չեն հանդիպում։ Բացի այդ, XVIII դարի սկզբին Վենետիկում մի տպատառ է օգտագործվել, որն իր ձևով նման է նախորդին, բայց ավելի փոքր է և թվում է, պատրաստվել է Ամստերդամում, № 4 տպատառը փորագրողի կողմից։ Այդ տպատառն է՝

Գլխատառ և բոլորգիր № 5. դիտվել է 1704-ից մինչև 1724 թթ. Վենետիկում տպագրված գրքերում։ Չափերն են՝ 62×0, 9 H₃, 0 մմ (նկ. 6)։

Իսկ նոտրգիրը հարում է նոտրգիր տպատառ № 6 խմբին։ Այն նկատել ենք 1664 թ. Շարակնոցում (աղ. I, Ա 5)։ Չափերն են՝ 85×1, 1 մմ (նկ. 7)։ Գրքի տպագրիչ Ոսկանը 778-րդ էջի հիշատակարանում գրում է, որ Ամստերդամ ժամանելիս ուներ նոտրգրի ձուլվածքներ, որ պատրաստվել էին չորս ամսվա ընթացքում։ Գրքի 777-րդ էջում երկու տող նոտրգիր կարելի է տեսնել։ Դա Ոսկանի 1666 թ. Աստվածաշնչում է (աղ. I, Ա 6) և այլուր, մինչև 1692 թ.։

Գ. Այժմ կնկարագրենք Նիքոլաս Քիշի և նրան վերագրվող տպատառերը։ Ն. Ք. անվանատառերը, որ Նիքոլաս Քիշի սկզբնատառերն են, կավելացվեն տպատառերի թվահամարներին։ Այս տառերը չափերով խիստ մոտ են ամստերդամյան նոր տառերին (որ վերագրվում են Ծարեցուն) և, կարող ենք ասել, հիմնականում նման են, թեև կարելի է որոշ տարբերակիչ նշաններ գտնել։

Դրանց փորագրումը սկսվել է Ոսկանի գործունեության դադարից մոտ տասնհինգ տարի հետո, երբ Վանանդեցին Ամստերդամում վերահաստատեց հայկական տպագրությունը։ Վանանդեցին պետք է որ ամբողջապես նոր տպատառերի համակարգ ստեղծեր։ Դրա համար նա որպես օրինակ ուներ ընտիր տպատառերով և Ոսկանի հիանալի տպագրական ճաշակով հրատարակած գրքերը։ Հասկանալի է, որ սրանք նախատիպ հանդիսացան տպատառի երրորդ խմբի, այսինքն՝ Ամստերդամում Նիքոլաս Քիշի օգտագործած հայկական տպատառերի համար։

Գլխատառ և բոլորգիր № 4 Ն. Ք. այն տպատառն է, որ կիրառվել է 1685 թ. Շարակնոցում (աղ. I, Ա 9)։ 1685 թ. տպագրված Խորենացու ժամանակագրությունը (աղ. I, Ա 11), որ կրկին Մաթևոս Վանանդեցու տպարանի արգասիքն է, նույնպես շարված է այս տառաձևով։ Չափերն են՝ 86×1, 1 H₄. 0∼4, 1 մմ (նկ. 3)։

№ 4 տպատառի մեջ, Ավետիսի տպատառերով հրատարակված 1663 թ. ժամագրքի հետ (աղ. 1, Ա 3) համեմատելիս, հետևյալ շեղումները կարելի է դիտել.

Թ (թո) տառի ձախ կողմի ուղղահայաց գծիկի և աջ կողմի կեռիկի միջև Ն. Ք.-ի մոտ տարածությունն ավելի մեծ է։

---

Ödon Schütz: Regi örmény nyomtatvanyok az Orszagos Szechényi Könyvtarban, Budapest, 1960 (*Ազգային* Széchényi *գրադարանի հայկական հնատիպ գրքերը, «Ազգային* Széchényi *գրադարանի տարեգիրք»), էջ 166—173։*

[14] „La librairie, l'imprimerie et la presse en Holland", La Haye, 1910, նկ. 72։

XVII դարի երկրորդ կեսին Ամստերդամում և XVIII դարում Վենետիկում լույս տեսած հայկական գրքերի տպատառերի համեմատությունը

| № | Ամստերդամյան տպատառեր | | | | | | | | | | | Նիքոլաս Քիշին վերապրելի տպատառեր | | | | | | | Վենետիկյան տպատառեր | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I | II | | III | | IV | | V | | VI | VII | IV Ն. Բ. | | V Ն. Բ. | | VI Ն. Բ. | | VII Ն. Բ. | VIII | | IX |
| | գլխատառ | գլխատառ | մանր | գլխատառ | մանր | գլխատառ | մանր | գլխատառ | մանր | մանր | մանր | գլխատառ | մանր | գլխատառ | մանր | գլխատառ | մանր | մանր | գլխատառ | մանր | գլխատառ |
| Ամստերդամ | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Ա.1 | | ● | ● | | | | | | | | | | | | | | | | | | |
| Ա.2 | | ● | ● | | | | | | | | | | | | | | | | | | |
| Ա.3 | | 0 | | | | ● | ● | | | 0 | | | | | | | | | | | |
| Ա.4 | | | | | | ● | ● | | | | | | | | | | | | | | |
| Ա.5 | | | | | | ● | ● | | | | | | | | | | | | | | |
| Ա.6 | | 0 | 0 | | | ● | ● | | | 0 | | | | | | | | | | | |
| Ա.7 | | 0 | | ● | ● | | | | | 0 | | | | | | | | | | | |
| Ա.8 | | 0 | | | | ● | ● | | | 0 | | | | | | | | | | | |
| Ա.9 | | | | | | | | | | | | ● | ● | | | 0 | 0 | | | | |
| Ա.10 | | 0 | 0 | | | ● | ● | | | 0 | | | | | | | 0 | | | | |
| Ա.11 | 0 | 0 | 0 | | | | | | | | | ● | ● | 0 | | | 0 | | | | |
| Ա.12 | | 0 | | | | | | | | | | 0 | | ● | | 0 | 0 | 0 | | | |
| Վենետիկ | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1 | | | | | | | | 0 | 0 | | | | | | | | | | ● | ● | |
| 2 | | | | | | | | 0 | 0 | | | | | | | | | | ● | ● | 0 |
| 3 | | | | | | 0 | | ● | ● | | | | | | | | | | 0 | 0 | 0 |
| 4 | | | | | | 0 | | ● | ● | | | | | | | | | | | | |
| 5 | | 0 | | | | | | | | | | ● | ● | | | 0 | 0 | | | | 0 |
| 6 | 0 | 0 | | | | | | | | | | ● | ● | | | | 0 | | | | |
| 7 | | 0 | | | | | | | | | | ● | ● | | | | 0 | | | | |
| 8 | | 0 | | | | | | | | | | 0 | 0 | ● | ● | | 0 | | | | |
| 9 | | | | | | | | | | | | ● | ● | | | | 0 | 0 | | | |
| 10 | | 0 | | | | | | | | | | ● | ● | | 0 | | | | | | |

Ք (քե) և Ի (ինի) տառերի պոչերը Ն. Ք.-ի մոտ ավելի խոշոր են։
Շեղումներ կան նաև Ց (ցո), Հ (հի) և Ծ (ծա) տառաձևերի մեջ։

№ 4 տպատառի միայն գլխատառերը մեզ հանդիպել են Վենետիկի գրքերում, որոնք թվագրվում են 1704-ից 1724 թթ. ընկած ժամանակաշրջանով։ Ուստի հավատացած ենք, որ տեսել ենք դրա Ն. Ք. տարբերակը ամբողջական գրքերի տեքստերում։ № 4 տպատառը հանդիպում է Անտոնիո Բորտոլիի տպարանում հրատարակված գրքերում, մինչդեռ № 4 Ն. Ք. տպատառերը հանդիպում են այն գրքերում, որտեղ Բորտոլիին լրացնում են օրլանդյան (1753) և թեոդոսյանց (1772) տպարանանիշերը։

Առաջին անգամ Ն. Ք. տպատառը տեսանք Վենետիկի Բորտոլիի տպարանում 1731 թ. հրատարակված գրքերում, ուստի կարելի է հանգել այն եզրակացության, որ հայկական միաբանությունը Քիշի 1729 թ. ձեռք բերած տպատառերը օգտագործման է տվել Բորտոլիին, և նա երկար ժամանակ վայելել է այդ մենաշնորհը։

№ 5 Ն. Ք. գլխատառն ու բոլորգիրը (№ 5-ին համարժեք) գտանք Վանանդեցու 1695 և 1698 թթ. ամստերդամյան գրքերում, այնուհետև Բորտոլիի 1741 թ. (նկ. 8) և Թեոդոսյանցների 1772 թ. գրքերում, երկուսն էլ Վենետիկից։ Տպատառի չափերն են՝ 62×9, 8∼0, 9 $H_2$, 7∼2, 8 մմ։

Շեղումները № 5 տպատառից հետևյալն են.

Հ (հո)-ի միջին շտրիխը թեք է, այնինչ նախորդինը հորիզոնական է։

Թ (թո) Ն. Ք.-ի մոտ տարածությունն ավելի ընդարձակ է, ինչպես և № 4 Ն. Ք.-ն։

Ց, Ծ (հի, ծա)—շեղումներ ձևի մեջ և այլն։

Տպատառ № 6 Ն. Ք. նոտրգիրը նույնպես համարժեք է № 6-ին։ Առաջին անգամ դա հանդիպում է 1685 թ. Շարակնոցում։ Վանանդեցին այն օգտագործել է նաև հետագայում։ Չափերն են՝ 84×1, 1 $H_4$, 0∼4, 1 մմ։

Վենետիկի գրքերում այդ տպատառը դիտել ենք 1731-ից մինչև 1753 թթ., իսկ Բորտոլիից 1734 թ. մի օրինակ ցույց է տրված նկ. 9-ում։

№ 6 Ն. Ք. նոտրգիր տպատառի տարբերակվելը № 6 տպատառից դեռևս ստուգման կարիք ունի, չնայած, ըստ 1685 թ. Շարակնոցի հիշատակարանի, աներկբայելի է այն փաստը, որ Նիքոլաս Քիշը նոտրգիր տպատառեր չի փորագրել։ Վանանդեցու մոտ միայն 1698 թ. Նոր կտակարանում (աղ. I, Ա 12) փոքր հասարակ նոտրգիր հանդիպեց, որն այժմ դասակարգում ենք № 7 Ն. Ք.։ Չափերն են՝ 62×0,9 մմ։ Այն կարելի է գտնել նաև վենետիկյան գրքերում, ինչպես օրինակ՝ Բորտոլիի մոտ 1741 թ. (նկ. 8)։

Հարկ է նշել, որ մի քանի տպատառեր չեն համապատասխանում վերոհիշյալ Ա՝ Ամստերդամի հին տպատառեր, Բ՝ Ամստերդամի նոր տպատառեր և Գ՝ Նիքոլաս Քիշի տպատառեր համակարգերին։

Գլխատառ և բոլորգիր № 3, որ պետք է տեղադրել Ամստերդամի №№ 2 և 4 տպատառերի չափերի միջև։ Դա դիտվել է միայն 1667 թ. մի գրքում։ Չափերը թեթևակի տարբերվում են Ծարեցու տպատառերից և ավելի շատ հիշեցնում են Ծարեցու «հին» տպատառերը, այսինքն՝ տպատառ № 2-ը։

Գլխատառ № 1. $H_9$, 3 մմ խոշոր չափերով։ Հանդիպում է 1695 թ. Ամստերդամի, 1704 թ. Վենետիկի հրատարակություններում (նկ. 9)։

Ըստ մեր դիտումների, գլխատառ № 9-ը ավելի փոքր է, քան գլխատառ № 1-ը, H6, 7 մմ բարձրության չափերով։ Դա մի խոշոր տպատառ է, որ հանդիպում է միայն Վենետիկում 1709-ից մինչև 1724 թթ.։

Միմիայն 1704-ից մինչև 1715 թթ. վենետիկյան գրքերում գտել ենք գլխատառ և բոլորգիր № 8-ը։ Չափերը՝ 97×1, 2 H4, 4 մմ։ Արդեն նշված բոլոր տառաձևերից տարբերվող այս տպատառը մեծ չափով կրում է հայկական ձեռագրերի գեղագրության ավանդույթները։ Ծագումը մեզ հայտնի չէ, սակայն իր հատկանիշներով, հավանաբար, ոչ մի կապ չունի Ամստերդամում հայկական տպատառերի փորագրման պատմության հետ։

Ամստերդամի հայկական տպատառերին վերաբերող փաստերն ու նկարները վերցված են Վենետիկի Ս. Ղազար կղզու Մխիթարյան միաբանության դրադարանի պատճեններից, որ ստացել ենք հայր Գ. Անդրեաս Ֆոգոլյանից։

Ամստերդամի հայկական տպագրությունը XVII դարի երկրորդ կեսին տվել է գեղատիպ որակյալ գրքեր, որ բարձր ճաշակի տեր հայ վարպետ տպագրիչների աշխատանքի արդյունքն է։ Այս տպագրիչների գործունեությունը լրացնում են Նիդերլանդիայի բարոկկո ոճով տպատառերի պատրաստման ժամանակաշրջանի երկու հռչակավոր տառափորագրողներ Քրիստոֆել Վան Դեյքի և Նիքոլաս Քիշի աշխատանքները։ Նրանց հայկական բարեձև տպատառերը ետ չեն մնում հայկական հանրահայտ գեղագիր տառաձևերից։

Այսպիսով, տառաձևերի և տպագրության մասին այս նյութը վերաբերում է ոչ միայն հայկական ավանդույթների մի մասին, այլև կարևոր է տպագրության ընդհանուր պատմության, նաև մշակույթի պատմության համար։

## АРМЯНСКИЙ ШРИФТ НИКОЛАСА КИША

Проф. ГЕОРГ ХАЙМАН (Венгрия)

**(Резюме)**

В 1959 г. Одон Шютц выяснил, что Матевос Ванандеци, возобновив в Амстердаме в 1685 г. армянское типографское дело, заказал венгерскому мастеру Николасу Тотфалуши Кишу армянский шрифт. На основе новых материалов и фактов в статье дополнено сообщение Одона Шютца и показана роль Киша в развитии армянского книгопечатания в Амстердаме. Литеры, выгравированные как Ван-Дейком, так и Николасом Кишем, своей формой не уступают общеизвестным армянским шрифтам. Приведенные факты представляют интерес также для истории книгопечатания периода барокко в Нидерландах.